

Գ Ր Ր
ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԵՌ ԳՆԱՀԱՏԱՆԵՐԻ
ԱՌ ՏԻԿԻՆ ԱՐՇԱԼՈՅՍ ԱՏՎԱԳԵԱՆ

Հոգեկան մեծ զոհունակութեամբ կը անդեկանանք որ Ամենայն Հայոց Արքայազնայն Աթոռակա Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգէն Առաջին իր արքայազն կոնդակով ձեզի շնորհած է
`Ս. ներսէս Ենորհալի` շքանշանը՝ որպէս գնահատանք Ս. Էջմիածնի Գանդեպ ձեր
ցոյց տուած մօտիկ հետաքրքրութեան եւ նրկար տարիներու ձեր նկեղեցանուէր ծա-
ռայութեան:

Նորին Արքութեան գնահատանքի այս արայայայտութիւնը արժանաւորին ընծայուած
պատիւ մը կը նկատենք, որովհետեւ մենք լուստեղնակ ենք որ դուք որպէս կրօնատէր
Տիկնանց Համալսմբումի հիմնադիր, երկարամեայ աստնապետուէրի եւ ամենագործն ան-
դամուէր՝ մեծ զոհողութիւններով, նուիրումով եւ ծառայատիրութեան ոգիով քա-
ռայապէս թէ նիւթապէս օգտակար Գանդեպացած էք Ս. Էջմիածնին եւ անոր արժանաւոր
Գահակալին:

Ուրախ ենք որ ձեր հիմնած Համալսմբումի անդամուէրները, հետեւելով ձեր բարի
օրինակին, կը շարունակեն իրենց աստուածահանոյ գործունէութիւնը եւ իրենց ծա-
ռայութիւնը ի սպաս կը դնեն Ս. Էջմիածնի բարեգարդման ու յառաջդիմութեան:

Որպէս Առաջնորդ Ամերիկայի Հայոց, մեծապէս կը գնահատենք ձեր կատարած նկե-
ղեցանուէր, հայրենանուէր եւ ազգանուէր անշահախնդիր գործունէութիւնը, կ'օրն-
ենք ձեզ ու ձեր հարազատները, եւ կ'աղօթենք որ Տէրը ձեզի կատարեալ առողջու-
թիւն պարգեւէ եւ իր օրհնութիւններով զարդարէ ձեր կեանքի օրերը:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Օգոստոս 18, 1981 - Նիւ Եորք, Ն.Յ.

Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցի Հայաստանեայց ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CHURCH

6700 WEST DIVERSEY AVENUE, CHICAGO, ILLINOIS 60635 TEL: (312) 637-1711

Եիզակո, Յունիս 16, 1981

Գերաշնորհ

Տ. Թորգոմ Ս. Արքեպիսկոպոս Մանուկեան
Բարեխնամ Առաջնորդ Հայոց Ամերիկայի
նիւ Եորթ, Ն.Ե.

Սրբազան Հայր,

Գոհունակութիւնը ունիմ Ձերդ Սրբազնութեան հաղորդելու թէ Կիրակի, Յունիս 14, 1981 շաբաթավերջին, Պէլվիլ, Իլլինոյի Սուրբ Շողակաթ Եկեղեցւոյ ծխական խորհուրդի հրաւերով եւ ծխական խորհուրդիս կարգադրութեամբ, այցելեցի տեղւոյն համայնքին, Շաբաթ, Յունիս 13-ին ներկայ եղայ եւ նախագահեցի Հ.Ե.Ե.Կ.Ա.ի Երջանային համագումարին եւ ծաշկերոյթ-Պարահանդէսին ինչպէս նաեւ Կիրակի առաւօտեան պատարագեցի եւ քարոզեցի:

Այս առթիւ զոհունակութիւնը ունեցայ տեղեկանալու թէ Պէյրուսթէն Ազնուափայլ Տիկին Արշալոյս Այվազեան աւելի քան ութը ամիսներէ ի վեր բժշկական լուրջ հսկողութեան տակ կը գտնուի իր բժիշկ զակին՝ Վաչէ Այվազեանին Իսթ Սէնթ Լուիսի մէջ:

Արդարեւ ծանօթ ըլլալով Տիկին Այվազեանին, տեղւոյն ծխական խորհուրդի փոխ-Ատենապետ Պարոն ծորժ Միրաֆեանի առաջնորդութեամբ Շաբաթ կէսօրէն ետք այցելեցի Բժիշկ Վաչէ Այվազեանին բնակարանը ուր սիրալիր եւ կարօտալիր հանդիպում ունեցայ Տիկին Այվազեանի հետ:

Ինչպէս ծանօթ էք արդէն, անցեալ Մարտ ամսուն, Պէյրուսթի մէջ մեծ շուքով նշուեցաւ Ամենայն Հայոց Հայրապետի Գահակալութեան քսանհինգամեակը Կրօնասէր Կանանց Համախմբումին նախաձեռնութեամբ եւ այս առթիւ երախտառու կազմակերպութեան շնորհուեցաւ Վեհափառ Հայրապետին Սրբատառ Կոնդակները ի գնահատութիւն իրենց տարած եկեղեցասէր ծառայութեանց եւ անշահախնդիր հաւատարմութեանց հանդէպ Մայր Աթոռ Ս. Էջմիածնին եւ անոր առաքելագործ Գահակալին:

Սոյն Կազմակերպութեան հիմնադիր եւ երկարամեայ Ատենապետուհի Տիկին Արշալոյս Այվազեան առողջական պատճառներով երկրէն բացակայելուն, իրեն ի մասնաւորի շնորհուած ձեռագիր Վեհափառ Հայրապետի Սրբատառ Կոնդակը եւ ''Ս. Ներսէն Ենորհալի'' արժանեաց շքանշանը իր Պէյրուսթի զակին՝ Կարպիսի միջոցաւ ուղարկուած է իրեն Ամերիկա, եւ որուն հանդիսաւոր ընթերցման համար խնդրեցի իր բժիշկ զակակէն ներկայ գտնուելու Կիրակի աւուր մատուցուած Ս. Պատարագին իր սիրելի մօր հետ, այս առթիւ նաեւ ծանօթացնելու զինք տեղւոյն համայնքին; Ուրախ եմ որ առաջարկիս ընդառաջելով ներկայ եղան եւ իրենց մասնակցութիւնը բերին Ս. Պատարագիս եւ հանգամանօրէն կատարեցի Սրբատառ Կոնդակին ընթերցումն ու յանձնումը, ի զոհունակութիւն Երախտաւոր Հայ Մօր եւ ի միխթարութիւն համայնքին:

Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցի Հայաստանէայց

ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CHURCH

6700 WEST DIVERSEY AVENUE, CHICAGO, ILLINOIS 60635 TEL: (312) 637-1711

Արդ, Սրբազան Հայր,


Խոնարհաբար պիտի խնդրէի Ձերդ Սրբազնութենէն Ձեր կողմէ եւս օրհնութեան եւ քաջալերութեան գիրով մը Ձեր մաղթանքները յայտնէիք արդէն իսկ Ձեզի քաջածանօթ եւ Պէյրութի Ս.Նշան Մայր Եկեղեցւոյ երբեմնի Եկեղեցասէր Տիկնանց Միութեան ժրջան անդամուհիներէն եւ 1959-էն սկսեալ Կրօնասէր Տիկնանց Համախմբումի հիմնադիր եւ երկարամեայ Ատենապետուհի Ազնուեփալ Տիկին Արշալոյս Այվազեանին որուն անսակարկ զօհողութիւններն ու նուիրումները արժանի ըրած են զինք դասելու Հայոց Աշխարհի Փօփկասուն Տիկնանց երամին:

Խոնարհաբար կը խնդրեմ նաեւ որ յատուկ նամակով իր որդիական սրտազին երախտագիտութիւնները յայտնէք Վեհափառ Հայրապետին, քանի ղեռ առողջական պատճառներով չէ կրցած այն ընել, արդէն իսկ իր ալեւոյթին դժբախտութիւնը ունեցած է անդամահատել տալու իր աջ ոտքը ծունկէն վար:

Վստահաբար Ձեր Օրհնութիւններն ու առողջութեան մաղթանքները քաջալերութիւն պիտի տան Այվազեան ընտանիքին, երախտապարտ եւ հայու զգացումներով միշտ հաւատարիմ մնալու մեր ազգի նուիրական յիշատակներուն հանդէպ եւ անոնց անկորուստ պահպանման այս ափերուն մէջ: Ի զօհունակութիւն իրենց եւ ի տեւականացումն հայ պանծալի անունին:

Կը ներփակեմ Բժիշկ Վաչէ Այվազեանի նոր հասցէն:

Կանխաւ յայտնելով որդիական շնորհակալիքս Ձերդ Սրբազնութեան հաւատարմական սրտազին եւ ամենաբարի իղձերով եւ մատչելով ի համբոյր Ձեր Ս.Աջոյն

Խոնարհ որդիդ՝

Հ.Ժիրայր Կրդ. Թազեան

MRS. ARSHALUYS AYVAZIAN
Dr. & Mrs. Vatche Ayvazian
31 Somerset Downs.
St. Louis, Mo. 63124 (314) 991-5070